

Հուլիսի 17-ին մարզպետի տեղակալ Վ. Դավթյանը այցելել է Գորիսի տարածաշրջան

Հուլիսի 17-ին ՀՀ Սյունիքի մարզպետի տեղակալ Վարդան Դավթյանը և մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ Հ. Հովհաննիսյանը այցելել են Գորիսի տարածաշրջան: Խնձորեսկ գյուղական համայնքում կատարել են համայնքի նախադպրոցական ուսումնական հաստատության սանիտարահիգիենիկ վիճակի ուսումնասիրություն, քննարկել համայնքում գործող դպրոցի հիմնախնդիրները:

Այցի շրջանակներում անց է կացվել աշխատանքային խորհրդակցություն Գորիսի թիվ 1 հատուկ դպրոցի տնօրեն Հ. Շալունցի հետ: Քննարկվել են ՅՈՒՆԻՍԵՖ-ի և ԱՄՆ-ի Միջազգային զարգացման գործակալության հետ համագործակցության շրջանակներում հատուկ դպրոցներում իրականացվող բարեփոխումները: Վ. Դավթյանը կարևորել է ծրագրի ընթացիկ աշխատանքների կանոնակարգումն ու հստակեցումը, իրականացվող աշխատանքների մեջ ծնողների ակտիվ ներգրավման անհրաժեշտությունը: